ՆՈՐ-ԴԱՐ

№ 120 ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հաւատք 27 Յուլիսի **1891** Հաւատք 27 Յուլիսի ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 120

Տարին՝ 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. ամիսը՝ 1 ր., հատը՝ 5 կոպէկ։ Բաժանորդ գրուում են ԹԻՖԼԻՍՈՒՄ միմայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» или Tiflis. Rédaction «Nor-Dar».

Լոյս տպագրութիւնը ընդ է ամեն օր (բացի մօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բաժին 2 կ., բնկալների համար կրկնապատիկ։

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Յայտնում է ի գիտութիւն ընդհանրութեան, որ սոյն յուլիսի 30-ին, ցերեկուայ ժամը 12-ին, քաղաքային տանը աճուրդ է նշանակուած 3 տարի ժամանակով կապալով տալու համար աֆիշների 50 սիւներ և նրանց վրայ յայտարարութիւններ կպցնելու իրաւունքը։

Աճուրդին մասնակցել ցանկացողները պայմանագիրը կարող են տեսնել Վարչութեան կանցելեարիայում ամեն օր ցերեկուայ ժամը 8½-ից—12½-ը։

3—3

ՌՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջ խմացիր—յետոյ խօսիր.
Քրոնիկոն. — Լաբեր. Մամուլի չորջը։
Թղթակցութիւններ.— Պետերբուրգից. Նամակ Պարսկաստանից.—Նոր-Զուղայից։
Քաղաքական.— Քաղաքական լուրեր։
Հեռագիրներ։
Բանասիրական. — Սկզբնագիտական նշումներ։
Յայտարարութիւններ։

ԱՌԱՋ ԽՄԱՑԻՐ—ՅԵՏՈՅ ԽՕՍԻՐ.

Ա.

Տգիտութիւնն երբէք այնքան վտանգաւոր չէ, որքան այն դէպքում, երբ տգէտը վեր է կենում և իր չիմացած բաների վրայ խօսում ու բանակռուի մէջ է մտնում։

Ո՞վ յայտնի չէ, որ պ. Գր. Սրբազանին ծանօթ չէ մեր հին գրականութեանը, մեր անցեալին, մեր պատմութեանը, մանաւանդ մեր եկեղեցական պատմութեանը, մեր եկեղեցական կանոնագրութիւններին, մեր պատմական աւանդականութեանը, մանաւանդ մեր եկեղեցական աւանդականութեանը. նա չգիտէ հայոց լեզուն՝ ինչպէս հարկն է, իսկ գրաբար ամենևին չգիտէ, ուստի և կարող չէ մեր հին մատենագրութիւնը կազդացած լինել,—բայց և այնպէս նա, այդ բոլոր անծանօթութիւններով հանդերձ, գրում է և ուզում է առաջնորդ լինել այնպիսի խնդիրներում, որոնց լուծողը պէտք է այդ բոլոր ծանօթութիւններն ունենայ և քաջ հմուտ լինի այդ բոլորին։

Օդի մէջ մխիթ կարելի է տուն շինել. տունը պէտք է հիմքի, գետնի վրայ շինել. բայց պ. Սրբազանին մեր պատմական հողից կտրուած է անում իւր կառուցումները։ Նա խօսում է մեր ամուսնական խնդրի մասին՝ առանց այդ խնդրի պատմութեանը ծանօթ լինելու. նա խօսում է մեր եկեղեցու մասին՝ առանց մեր եկեղեցու պատմութեանը ծանօթ լինելու. նա խօսում է տեղակալութեան մասին՝ առանց իմանալու թէ ինչ բան է տեղակալութիւնը և ինչ պատմութիւն ունի... և երբ նրան ցոյց են տալիս՝ թէ սխալ են իւր ասածները և պատմական հիմք չունին,—նա այդ ժամանակ դիմում է այնպիսի մարդկանց պաշտպանութեանը, որոնք «սևը սպիտակից չեն զանազանում»։ Նրա փոյթը չէ թէ այդ մարդիկը տգիտութեան հետ և առողջ դատողութիւնից զուրկ լինելու առաւելութիւնն ունին. այդ փոյթ չէ պ. Սրբազանին, որովհետև նեղն ընկած տեղը նրան հարկաւոր են միայն ձայները, աղաղակները յօգուտ իրեն, և նա կարծում է թէ այդ ձայների, աղաղակների մէջ կը խլացնէ ճշմարտութիւնը։

Բ.

Ահա թէ տեղակալութեան խնդրի առթիւ ինչ է գրուած պ. Սրբազանին օրգանում («Մշակ» №81).

«Եթէ ձեր ասածի ստուգութեանը համոզուած էք, պարտաւոր էիք ցոյց տալ թէ ու համարով այն կոնդակները, որոնցով հաստատուած են եղել տեղակալները 36 թուականից մինչև այսօր, այսինքն Պօլօժենիէի տրուելուց մինչև այսօր։ Օրինակ՝ Յովհաննէս, Ներսէս, Մատթէոս, Գէորգ կաթողիկոսները կոնդակով հաստատեցին տեղակալներ. եկէք այժմ, որ Երէմիա Սբ. Պետրոսը պէտք չէ. իսկ եթէ ոչ տեղակալ է և դուք ի զուր էք խօսում...։ Մեզ յայտնի չեն այդպիսի կոնդակներ. մենք գիտենք, որ Պօլօժենիէից թէ առաջ և թէ յետոյ, չեն եղած այդպիսի կոնդակներ, այլ որ և է կաթողիկոսի մահուանից յետոյ՝ տեղակալներ եղած են առանց կոնդակի»։

Եթէ մարդ տգէտ է, մի բան չգիտի, աւելի լաւ է, որ նա լռի այդ մասին և չխօսի ուրիշներին մոլորեցնելու համար. եթէ «Մշակի» խմբագրութիւնը տգէտ է և չգիտէ թէ 36 թուականից մինչև այսօր բոլոր տեղակալները կաթողիկոսական կոնդակով են տեղակալ կարգուած, թէ ոչ,—այդ մասին գոնէ պիտի լռէր և չասէր ուրիշներին մոլորեցնելու համար, թէ «Կաթողիկոսի մահուանից յետոյ՝ տեղակալներ եղած են առանց կոնդակի»։ Ասում է թէ տեղակալութեան խնդրի առթիւ ինչ է գրուած պ. Սրբազանին օրգանում («Մշակ» №81). Ասում է թէ տեղակալութեան խնդրի առթիւ ինչ է գրուած պ. Սրբազանին օրգանում («Մշակ» №81).

Ահա թէ ինչ է գրուած պ. Սրբազանին օրգանում («Մշակ» №81).

«Եթէ ձեր ասածի ստուգութեանը համոզուած էք, պարտաւոր էիք ցոյց տալ թէ ու համարով այն կոնդակները, որոնցով հաստատուած են եղել տեղակալները 36 թուականից մինչև այսօր, այսինքն Պօլօժենիէի տրուելուց մինչև այսօր։ Օրինակ՝ Յովհաննէս, Ներսէս, Մատթէոս, Գէորգ կաթողիկոսները կոնդակով հաստատեցին տեղակալներ. եկէք այժմ, որ Երէմիա Սբ. Պետրոսը պէտք չէ. իսկ եթէ ոչ տեղակալ է և դուք ի զուր էք խօսում...։ Մեզ յայտնի չեն այդպիսի կոնդակներ. մենք գիտենք, որ Պօլօժենիէից թէ առաջ և թէ յետոյ, չեն եղած այդպիսի կոնդակներ, այլ որ և է կաթողիկոսի մահուանից յետոյ՝ տեղակալներ եղած են առանց կոնդակի»։

Եթէ մարդ տգէտ է, մի բան չգիտի, աւելի լաւ է, որ նա լռի այդ մասին և չխօսի ուրիշներին մոլորեցնելու համար. եթէ «Մշակի» խմբագրութիւնը տգէտ է և չգիտէ թէ 36 թուականից մինչև այսօր բոլոր տեղակալները կաթողիկոսական կոնդակով են տեղակալ կարգուած, թէ ոչ,—այդ մասին գոնէ պիտի լռէր և չասէր ուրիշներին մոլորեցնելու համար, թէ «Կաթողիկոսի մահուանից յետոյ՝ տեղակալներ եղած են առանց կոնդակի»։

Մեր եկեղեցական աւանդութեամբ կաթողիկոսի քառաւոր հրամանը հաւասար նշանակութիւն և զօրութիւն ունի, ինչ որ գրաւոր հրամանը, խոստումը. այդ գիտէ ամեն մի վարդապետ, այդ գիտէ ամեն մի եպիսկոպոս, ս. Սինոդի անդամ... ուստի թէ պատմութեան մէջ պատահել է, որ կաթողիկոսները գրաւոր հրամանով, կոնդակով չեն հաստատած տեղակալներ, այլ միայն մեռնելու ժամանակ բանաւոր հրաման են տուած թէ ում են կարգում տեղակալ,—այդ միևնոյն է թէ գրաւոր հրամանով, կոնդակով են տեղակալ կարգել։

Երբէք չի պատահել, որ մեկն առանց կաթողիկոսի բանաւոր կամ գրաւոր հրամանի տեղակալ եղած լինի. այդպիսիները եղել են միայն բացառիկ դէպքերում և կամ համարուելու են ընդվզողներ։

Չնայելով որ կաթողիկոսների բանաւոր և գրաւոր հրամանները համազօր նշանակութիւն ունին, բայց մեր վերջին կաթողիկոսները գրաւոր հրամանով, կոնդակով են տեղակալ կարգել։ Այդպէս կոնդակով է տեղակալ կարգել Ներսէս կաթողիկոսը Ղուկաս արքեպիսկոպոսին, Մատթէոս կաթողիկոսը Գէորգ արքեպիսկոպոս Վեհապետեանին, իսկ Գէորգ կաթողիկոսը Բեսարաբիայի վիճակաւոր առաջնորդ Մոկաց արքեպիսկոպոսին։

Այդ եպիսկոպոսները բոլորը կաթողիկոսից են տեղակալ կարգուել և դժուար չէ կոնդակների պատճէնները ձեռք բերել։

Մոլորութիւնները փարատելու համար հարկ ենք համարում բերել Գէորգ կաթողիկոսի այն կոնդակի պատճէնը, որով կաթողիկոսը պեղակալ է կարգում ու հաստատում Մոկաց արքեպիսկոպոսին։

«Գէորգ ծառայ Քրիստոսի և անհամանելի կամքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթողիկոս ամենայն Հայոց ծայրագոյն գաւառիցդ համազգական նախանձաւոր Աթոռոյ Աբրահամեան առաքելական մայր եկեղեցւոյ սրբոյ կաթողիկէ Էջմիածնի, գերապատիւ Տէր Մոկաց սրբազան արքեպիսկոպոսի թեմակալ առաջնորդի Հայոց վիճակին Նոր Նախիջևանու և Բեսարաբիոյ՝ հաւատարիմ պաշտօնէի մայր Աթոռոյս և յաւէտ սիրելւոյ մերում խնդալ ի Տէր։

Անկեալ ի մահիճս և տեսեալ զվտանգաւոր կրկնատեսակ տկարութիւնս անձին իմոյ՝ որ տակաւ առ տակաւ մաշեն զիս, փութամ կանխել ապահովել զկարեւոր մասունս ինչ պարտաւորութեանց իմոյ, ուստի կարգեմ և հաստատեմ զնաւատարիմդ եկեղեցւոյ և Հայրապետութեան Հայաստանեայց՝ զսիրելիդ իմ ի կաթողիկոսական տեղապահ, և յանձն առնեմ խոհեմ, զգոյշ, չրջահայեաց, և բարենախանձ կառավարութեան քում լիազօր իրաւամբ զղեկավարութիւնս Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, Գէորգեան ճեմարանի իմ սիրելւոյ և սիրոյդի, որում կարգեցի և անդամ առաջարկելով նաև ի բարձրագոյն հաստատութիւն։

Աւանդեցի և հոգևոր որդւոյ իմում սիրելւոյ և հարազատի Տ. Վահրամ եպիսկոպոսի Մանկունւոյ զբազում պատուերս և հրահանգս անհրաժեշտս առ ի կենդանի պահելոյ.

Եօթը Ֆլորին, սպիտակ ջորին,
Մեռնի կինն՝ առնի քենին*)։

Ուրեմն հարցը ոչ թէ կանոնի նորութեան և առաջադիմականութեան մէջ է, այլ հովուական հոգաբարձութեան մարմնի վերածնութեան և վերանորոգութեան մէջ, որպէս զի այդ մարմինը նորից համակուի եկեղեցւոյ վարդապետութեան և օրէնքների ոգւով և քաջ ըմբռնէ, որ լծուում են դէպքեր, երբ Աստուածային իրաւունքը հրամայում է «Ջաղրմութիւն կամիմ և ոչ զոհ։ Եարաթ վասն մարդոյ եղև.**)»

*) Ս. Սեդրակեանը իւր աշխատութեան 2 գլխում այս մասին մի քան է պատմում Մեզ յայտնի է այս դէպքը ինչպէս և չատ դէպքեր, որոնք Ս. Եղիայեան կազմախտիական կարգն են մտած. վճիռը պատճառաբանուած է Ս. Գրոց անմիջական ցուցմունքով—«Կին առ քերը իւրով մի առնուցուս նախանձընդդէմ յայտնել զառաքեալս նորա առնելս ընդարտաքս» ergo, մեռնելուց յետոյ ներելի է։

**) Ոչ մի եկեղեցի այս կողմից այնքան ստիպողականութիւն չ'ունեցել և չունի, որքան Հայաստանեայց եկեղեցին։ Բնական է յիշել պատմութեան այն դէպքերը երբ հովուական հոգաբարձութիւնը միահամուռ կերպով, ամբողջ աշխարհի հետ լուծել է պահի նուիրագործութեան բոլոր պայմանները,—արտնական մերձաւորութեան և հասակի բոլոր արգելքները և հրամայել է

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ ՆՇՄԱՐՆԵՐ*)

«ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ» Արքեպիսկոպոսի Սեդրակեան, Մոսկուա 1891.

Ինչ որ վերաբերում է այն պատճառաբանութեան, թէ այս չարեաց բոլոր պատճառը չհաւատեան մասին ներգործող կանոնների անորոշութիւնն է, անհակասութիւնը և թէ դրանց բարձման համար անհրաժեշտ է մի նոր կանոնագրութիւն ժամանակի պահանջների համեմատ՝ առ այս Թողներուի մեզ նկատել Ս. Սեդրակեանին, որ սրանց պատճառը այն չէ, որ որոշ կանոնագրութիւն չունինք, այլ այն, որ հզած կանոնագրութիւնը ճշտութեամբ գործադրելու և հակելու համար գործադրուած անձինք ոչ միայն պէտք եղածին չափ հմուտ չեն մեր եկեղեցւոյ հոգւոյն և կանոնագրութեան, այլ և ցանկութիւն էլ չ'ունին հմտանալու. նրանց գիտութիւնն այն չափ է, որ կարողանան դիւրութեան հարկաւոր տեղը Շնորհալիի կանոնը ցոյց տալ, հարկաւոր տեղը Պարտաւ որոշումը։ Այս տեսակ անձանց ձեռքը ինչ կասկած, որ կանոնը նման է սարդի ոստայնին, որին հանդիպողը եթէ հասարակ ճանճ է՝ բռնուում է և խեղդւում. իսկ եթէ իշխմիջոց է՝ պատռում է և անցնում...

Ի հարկ է մի խելահաս մարդի կողմից անմտութիւն կլինէր մտածել, թէ Հայաստան. եկեղեցին չ'հաւատեան մասին որոշ և պարտաւորիչ ընդհանրական կանոն չունի և՝ ի հարկէ Հ. Բանասիրականն էլ այն մտօք չէ ասած թէ՝ «Այս հարցը մշակման կարօտ է», որ որոշուած չէ, այլ ասած է այն մտօք, որ եղած կանոնագրութեան պատմական և կատարելագործութեան հանգամանքները և պարագաները չատ կողմից մութ է և չատերին էլ անծանօթ. Սթէ Ս. Սեդրակեանի նման մի հեղինակ, որ թեկնածութիւն ունի վարդապետ լինելու օրինաց՝ զանցառութեան է տալիս իւր աղիսաւիների մէջ Աբրահամ կաթողիկոսի կանոնական թղթի նման մի ակտ, կարող ենք երևակայել միջակ ընդհանուրի խղացութեան աստիճանը Այս իսկ պատճառով Ս. Սեդրակեանի մէջ բերած օրինակները այդ կողմից իննդրի էութեան հետ մի որ և իցէ անմիջական յարաբերութիւն չունին և չեն կարող համոզիչ փաստ լինել մի նոր կանոնագրութեան անհրաժեշտութիւն նորմ) համաձայն իւր սկզբունքների և հայեցողութեան. իսկ մասնաւոր դէպքերում և արտակարգ հանգամանքներում գործադրելու եղանակի որոշումը թողնում է վարչական իշխանութեան

*) Տես «Նոր-Դար» № 119.

ժարիլու։ Դրանք՝ ինչպէս արդէն նկատել ենք. կամ չարամիտ զեղծումներ են, կամ հովուական աչալրջութեան պակասաւորութիւն, կամ ուրիշ խօսքով՝ օրէնքի կիրառական խանգարմունք (Функціональное разстройство). քան թէ օրգանական (органическій) պակասաւորութիւն,— Vitium organicum։

Ինչպէ՞ս թէ ամուսնութիւնն համար նոր օրէնքներ խմբագրուեցաւ, ինչպէս պահանջում էր Օրագիրը և ինչպէս պահանջում է Ս. Սեդրակեանը. բայց ինչ երաշխաւորութիւն, որ նոր օրէնքներն աւելի լաւ պիտի ներգործեն, ժողովուրդի աչքում աւելի պատկառելի պիտի երևին, քան թէ հին, փտած խել մը օրէնքները, որ ըստ ընկերական կեանքի պահանջների փաստաբանների՝ այլևս անտանելի են և չեն համապատասխանում ժամանակի պահանջներին. Կարելի է արդեօք երաշխաւորել դրանց անվրէպ, անթերի գործադրութիւնը և այլևս տեղիք չէր մնար ոչ զեղծումների և ոչ դժգոհութիւնների. Օրէնսդիր մարմինը օրինադրութեան ժամանակ որոշում է օրէնքի ընդհանուր սահմանները (нормы) համաձայն իւր սկզբունքների և հայեցողութեան. իսկ մասնաւոր դէպքերում և արտակարգ հանգամանքներում գործադրելու եղանակի որոշումը թողնում է վարչական իշխանութեան

Մի օրէնք, մի օրինադրութիւն, որքան էլ մանրամասնօրէն և բազմակողմանի կրչադատուած ու մշակուած լինի՝ դարձել ժամանակի և գրութեան բոլոր մասնաւոր և ուրոյն հանգամանքները կարող չ' նախատեսնել, այդ պատճառով և վարչական բարձր իշխանութիւնները օժտուած են մի տեսակ արձակման իրաւունքով—Potestas dispensationis, ի հարկէ միշտ մի որոշ սահմանում։ Նոյնանման դրութեան մէջ է և եկեղեցւոյ օրէնսդրական ժողովը՝ եկեղեցւոյ իրաւաստեղծան հնձարուած խնդիրների մասին օրէնք կանոնադրելիս։ Բոլոր մասնաւոր և ուրոյն դէպքերում պարագաները կարող չէ նախատեսել Մանաւանդ մեր եկեղեցու նման դրութիւն ունեցող եկեղեցին, որի օրէնքների և կանոնների ոյժը իրանց մէջ պիտի լինին, և որ ներքին բարոյական ոյժից զատ՝ ուրիշ արտաքին ոյժ չունին, որ այդ օրէնքների պարտաւորիչ զօրութիւնը պահպանէ. Ուրեմն այդ նոր կանոնադրութեան ժամանակ էլ օրինալուծման իրաւաստեղծութիւնը պիտի ներգործէ և զարձեալ օրէնքը պիտի լինի ի ձեռս առաջնորդաց, որոնք՝ եթէ նոր պահանջների համեմատ նրանց հաճոյ կլինի թողուլ զԲանն Աստուծոյ և պաշտել զեղան՝ անչուշտ «քանդիչներն, «Սև վանգիո»-ներ կ'գտնեն հին առածը

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Ռուսաստանի ներքին գործերը

Ռուսական կառավարությունը, որ ամենից առաջ հոգում է իր ժողովրդի բարեկեցության մասին, ամեն տարի մեծ գումարներ է հատկացնում ժողովրդական կրթության գործին տարածելու համար։ Ներկայացնում ենք ստորև 1892 թվականի համար նշանակված գումարների ցուցակը։

Ընդհանուր կրթության նախարարության համար — 36,000,000 ռուբլի։

Ուսումնական շրջանների համար — 1,000,000 ռուբլի։

Ուսումնական շրջանների ուսումնական հաստատություն

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Ա. Ա. Ա.

գրաւելով նա նպատակ ունի միայն արգելելու, որ մի որև է անժամանակակից քաղաքական վճռով Ֆրանսիան Ռուսիային պատերազմի մէջ չձգէ։

Ինչ վերաբերում է անգլիական լրագիրներին, սրանք Կրոնշտադի անցքերին քաղաքական նշանակութիւնից զուրկ չեն համարում։ Այսպէս, մինիստերական Standard»-ը կարծում է, որ այդ անցքերը ցոյցեր են, որոնք ուղղուած են եռապետական դաշնակցութեան վերահաստատման դէմ։ «Ոչ ոք չէ կասկածում, որ Ռուսիայի և Ֆրանսիայի միջև պաշտօնական դաշնագիր չկայ հաստատուած, բայց ակներև է, որ հարկաւոր րոպէին ռուսաց կառավարութիւնը չի հրաժարուիլ այդ դաշնագիրը հաստատելուց»։ Բայց ընդ նմին «Standard»-ը ապացուցանում է, որ դաշնակցութիւնից կ'օգտուի միայն Ռուսիան, և զարմանում է, որ Ֆրանսիան ուզում է բարեկամանալ «արևմտեան և մանաւանդ ֆրանսիական կուլտուրան ատող Ռուսիայի հետ»։ «Daily Teleg.»-ը և Morning Poct»-ը կարծում են, որ Ֆրանսիայի և Ռուսիայի իրար մօտենալը վտանգ չէ սպառնում և Ռուսիան պաշտօնապէս դաշնագիր չի հաստատիլ Ֆրանսիայի հետ։ Անգլիան համակրում է կեդրոնական պետութիւններին նրա համար, որ ինքը խաղաղութիւն է ցանկանում և ոչ թէ նրա համար, որ ցանկանում է Ֆրանսիայի հետ կռուել, որի հետ կռուելու ոչ մի աւիթ չունի։ «Rechsbote»-ն և Վեննայի Neue Wiener Tagbl.»-ը կարծում են, որ Կրոնշտադի անցքերը բոլորովին չեն փոխել ռուս-ֆրանսիական ներկայ յարաբերութիւնները։ «Ռուսիայում դէպի Ֆրանսիան տածած ջերմ համակրանքների բռնկումն առաջացաւ եռապետական դաշնակցութիւնը վերահաստատելուց. բայց չուտով կրքերը կը խաղաղեն և Ֆրանսիան ու Ռուսիան իրենց առաջուայ տրամադրութիւնը կը ստանան»։

Մինչդեռ ֆրանսիական լրագիրները հրճուանքով են խօսում Կրոնշտադի անցքերի մասին։ «Temps»-ն ասում է. «Նրանք որոնք զբաղւում են բացառապէս զգացմունքի քաղաքականութեամբ, Կրոնշտադի անցքերի մէջ կը տեսնեն այդ զգացմունքը և երկու կայսրութիւնների միջև հաստատուած դաշնակցութեան պարզ արտայայտութիւնը», թէև «Ռուսիայի աւանդականութիւնն, ինչպէս և Անգլիայինը, թոյլ չէ տալիս դրական համաձայնութիւններ»։ «Այդ անաղմուկ քաղաքականութիւնը, այդ չգրուած դաշն իր ոյժը կը պահպանէ եւրոպական խաղաղութեան և բարօրութեան համար»։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի
ՀԻՒՍԻՍԱՓԻՆ ԴՈՐՏԱԿԱՒՈՐԻՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 յունիս.— Ձմեռային պալատում եղած Նախաճաշից յետոյ սերբիացոց թագաւորը հետևորդների խմբի հետ այցելեց Ալէքսանդր-Նևացու մենաստանը։ Մենաստանից յետոյ այցելեց Կազանեան տաճարը, գիտեց իշխան Գոլենիշչև-Կուտուզով-Սմոլենսկու գերեզմանը և այցելեց Իսահակեան տաճարը։ Երէկ առաւօտեան թագաւորն այցելեց Պետրոս-Պօղոսի տաճարը, որտեղ հոգեհանգիստ կատարուեց կայսր Ալէքսանդր II-ի և կայսրուհի Մարիա Ալէքսանդրովնայի յիշատակին. այստեղ թագաւորը պաակ դրեց կայսր Ալէքսանդր II-ի գերեզմանի վրայ։

ՄՈՍԿՈՒԱ, 24 յունիս.—Այսօր առաւօտեան ժամը 11¾-ին արտակարգ գնացքով այստեղ հասան ֆրանսիական ծովագնացները։ Կայարանում դիմաւորելու համար հաւաքուել էին քաղաքապետը, ֆրանսիական ընդհանուր-հիւպատոսը, ֆրանսիական ցուցահանդէսի մասնաժողովի անդամները և բազմաթիւ ժողովուրդ։ Կայարանից ֆրանսիացի հիւրերը քառաձի կառքերով սլաւեանական բազարը գնացին, որտեղ նրանց համար բնակարանները էին պատրաստուած։ Ֆրանսիական և ռուսաց աղգային դրօշակներով զարդարուած փողոցներում հաւաքուած ամբոխը ցնծագին բացականչութիւններով ողջունում էր հիւրերին։ Ամբոխը ծովակալ Ժերվէին ձեռքերի վրայ բարձրացնելով ներս տարաւ զարդարուած հիւրանոցը։ Վարչական բարձրաստիճան անձերին յատկացրած բնակարանում, որտեղ դրուած էր Կարնոլի պատկերը, ծովակալին պատգամաւորութիւններ ներկայացան ֆրանսիական գաղթականներից։ Սլաւեանական բազարում նախաճաշելով, ֆրանսիացի սպաները դիտեցին Կրեմլի պալատը, թագաժառանգի սենեակները, զէնքի պալատը և Կրեմլի տաճարները և յետոյ գնացին պատմական թանգարանը միջին-ասիական ցուցահանդէսը դիտելու համար։ Թանգարանի առաջ զինուորական երաժշտական խումբը, հիւրերի ներս գնալիս և դուրս գալիս, նուագեց մարսելիէզը. ցուցահանդէսի մասնաժողովը Ֆրանսիայի սպաներին դիմաւորելով մուտքի մէջ և շրջեցնելով ցուցահանդէսի մէջ, նրանց շամպանեան գինի և միրգ առաջարկեց։ Ժամը 7-ին քաղաքագլուխը ճաշ էր պատրաստել 120 հոգու համար. ճաշից յետոյ Ֆրանսիայի հիւրերը զինուորական բանակը կը գնան, այնտեղից կը վերադառնան ցուցահանդէսը, որտեղ շքեղ հրաւառութիւն կը լինի և էքսպոնէնտներին ընդհանուր մեծ «Punsch» կը դրուի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 յունիս.— Երէկ երեկոյեան ժամը 7-ին Թագաւոր կայսրն և Թագուհի կայսրուհին Պետերհոֆից Կրոնշտադ գնացին, որտեղ նստեցին «Держава» նաւը Ֆինլանդիա գնալու համար։

Երէկ երեկոյեան սերբիացոց թագաւորը Պետերհոֆից այստեղ ժամանեց և գնաց Ձմեռային պալատը, որտեղ նրան և իր հետևորդների խմբին բնակարան է յատկացրած։

Երէկ երեկոյեան ծովակալ Ժերվէին, ֆրանսիական նաւախմբի 40 սպաներ և 16 ենթասպաներ Մոսկուա ուղևորուեցին։

«Правит. Вѣст.»-ում տպուած է. «Պետերհոֆի պալատում յունիսի 16-ին եղած ճաշի ժամանակ Թագաւոր կայսրը, բաժակը բարձրացնելով, հետևեալ նշանաւոր խօսքերն ասաց. «Հասարակապետութեան նախագահ Կարնոլի, ֆրանսիական նաւատորմղի և մանաւանդ ծովակալ Ժերվէի նաւախմբի կենացը։

Պաշտօնական հեռագիրը հաղորդում է, որ յունիսի 28-ին թագաժառանգը մտել է Օրէնբուրգի նահանգի սահմանները։ Յունիսի 21-ին նորին բարձրութիւնը Տրոյցկ է ժամանել։

Յունիսի 28-ին Թագուհի Կայսրուհու անուանակոչութեան նշանաւոր օրը, վաղօրդեան պատարագ է մատուցուել և մաղթանք է կատարուել Նորին Բարձրութեան, բոլոր վարչական անձերի, ծառայողների և պատգամաւորութիւնների ներկայութեամբ. մաղթանքից յետոյ զօրախաղ է տեղի ունեցել։ Առաւօտեան մօտաւորապէս ժամը 2-ին թագաժառանգն ուղեւորուել է Վերին-Ուրալսկ, որտեղ գիշերել է և երէկ առաւօտեան շարունակել է ճանապարհը։ Ճանապարհ ընկնելուց առաջ, Նորին Բարձրութիւնը պատգամաւորութիւնները է ընդունել, եղել է աւագ եկեղեցում և դիտել է կազակների արտօնեալ 12-րդ գունդը։

«Нов. Вр.»-ն հաղորդում է, որ յուլիսի 23-ին Պարիզից Ֆրանսիական դեսպանատունն են բերուած այնտեղի ս. Աստուածածնայ եկեղեցում պահուած և Ղրիմի պատերազմի ժամանակ Եւպատորիայից առած խաչվառները։ Այս օրերս խաչվառները Եւպատորիա կուղարկուեն։

ԼՈՆԴՈՆ.—Համայնքների ժողովը մերժեց Կոկլինի առաջարկը, որի մէջ ասուած էր, թէ Աւղանստանի և Հնդկաստանի միջև յարաբերութիւնները գոհացուցիչ չեն և ցանկալի կը լիներ երկաթուղին շարունակել մինչև Կանդագար։ Հնդկաստանի գործերի մինիստրի օգնական Դորստը ասաց, որ դէպի Աւղանստանն եղած յարաբերութիւնները լաւ են, որ Էմիրը Անգլիայի վերաբերմամբ իրեն բարեիղճութեամբ է պահում և նա ոչ թէ ռուսական իշխան է, այլ անգլիացիների անկախ դաշնակից և պարտաւոր է Անգլիայի հետ խորհրդակցելու միմիայն արտաքին քաղաքականութեան վերաբերմամբ։ Այնուհետև Դորստն ասաց, որ Էմիրի առաջնորդութիւնը լաւացել է և Քաբուլում այժմ ապրում են մի քանի եւրոպացիներ, որոնք աշակցում են գործարաններ շինելուն և առևտրի զարգացմանը։ Իսկ Աւղանստանում գոնէ 1 մղոն երկաթուղի շինելու համար եթէ Անգլիան փորձ անէ, Էմիրը ամեն անգամ էլ կը մերժէ։

Պատասխանատու խմբ. Մ. ԱՐԵՂԵԱՆ
Հրատարակիչ՝ Ս. ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մի հայ երիտասարդ, որ ուսուցչական չէնդ ունի, ցանկանում է ուսնեննալ դասեր առաջոյ չեղած հայոց եկեղեցական դպրոցներում։ Դիմել կարող են իրեն հետևեալ հասցեով. Ղզլար, վաճառականի խանութ՝ Մկրտիչ Մոլթանեանցին։

(Դր.) 6—3

«ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՄԵՂՔԵՐ»

խրատական գրուած՝ ծանօթանալու համար իրենց ջղային կազմուածքը խանգարածների համար։

հեղ. Դ-ր Լօրենչէ

առաջին հրատարակութիւն Դ-ր Բ-լիւ։ Գինն է 1 րուբ.

Այս օգտակար գիրքը պարունակում է իր մէջ չատ խրատներ, թէ՛ ինչպէս կարող են աղատուել հիւանդներն վնասիչ ախտի վերնատակար հետևանքներից և վերականգնել խանգարուած ոյժերը և առողջութիւնը։ Այս գիրքը թարգմանուած է Մոսկուայի գլխաւոր նահանգական կօմիտէից։

Հրատարակութեան պահեստն է Օտտօ Ասպերգէրի մօ Լայպցիգում (Otto Asperger Leipzig) (Սաքսոնիա)։ Օտարաքաղաքացիները ճանապարհածախս չեն վճարում։

(M.) 32—17

ԹԻՖԼԻՍԻ ՀՕԳՈՒ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

յայտնում է սլանով, որ ընկերութեանս 1891 թուի անդամները կարող են ստանալ կենդրոնական գլխաճառանոցից ընկերութեան հետևեալ հրատարակութիւնները.

1) Տոլստոյ—Աստուածաբիտէ արդարն ու մեղաւորը։
2) Վալտնէր—Հաւատարիմ Սալիտրին։
3) Պեստալոցի—Լինհարդ և Գերտրուդ։
4) Նալ և Դամայանտի։
5) Ռոզընհարն—Նաւի փոքրաւորը։
6) Սպիրի՝ Ուռենց Յովսէփ։

(Խմբ.) 10—2

BATEAUX A VAPEUR FRANÇAIS APAQUET ET Cie.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱՔԻ ԵՒ Ը՝ՆԿ.

Ուղիղ և կանոնաւոր նաւագնացութիւն Մարսէլից Բաթում երկու շաբաթը մի՛ւսդ չորեքշաբթի օրերը, սկսած չորեքշաբթի, ապրիլեան 21-ից և Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն, Կ. Պոլիս։

ԲԱԹՈՒՄԻՑ ԳՆՈՒՄ ԵՆ

Շորեք.	17/29 յուլիսի	շոգենաւ	«Սիրկասի»	կապիտան	Բօյէ.
»	31/12 յուլիսի	օգոստոսի	«Անատոլիա»	»	Գարրիգ
»	14/26 յուլիսի	օգոստոսի	«Մինգրելի»	»	Փիքուէն
»	28/9 օգոստոսի	անպատ.	«Սիրկասի»	»	Բօյէ

և ապրպէս երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին կէսօրուայ։

Բաթումից Պարիզ ուղիղ հաղորդակցութեան տոմսակները սովորական գնից զիջումով։

Տեղեկութիւնների և բեռների համար ճանապարհորդները թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակալներին—Բաթումում ԴԱՐԱՆԻՕՆԻՆ, Նաբերեժնայա, Թիֆլիսում՝ պ. Վիկտոր դ'Արնօնի, Մէջի փողոց, գեներ, Տէր Աստուածատուրեանի նախկին տուն։

Բագուում՝ պ. Սամուէլ Դիլգարեանցին, Կոլիբեակինսկաեայ հրապարակում։ Նովորոսսիյսկում՝ պ. Լուի Բենօյին։

(95) 10—8

ԱՓԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Երկու սեռի անձանց համար

ՏԱՄՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Առարտողներն ստանում են *ատեստատներ*։

Առանձնի առարկաները սրանք են՝ 1) Առևտրական Տնտեսութիւն, 2) Առևտրական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համբիչի վրայ, 5 Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն, և 7) գեղագրութիւն։

Ուսումն սկսուելու է սեպտեմբերի 16-ից։ Ընդունելութիւնները սեպտեմբերից 2-ից ամենայն օր երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում Սօլօլակում Նագորնայա փողոցի վրայ, Ալէքսանդր Փրիդոնովի տանը №9, դեղատան դիմաց։ Ծրագիրն ու կանոնները կարելի է ստանալ ԶՐԻԱՊԻՕՆ եղբ. Ծովիանովների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիները դիմում են կուրսերի հիմնողին.—въ Тифлисѣ. С. П. Мануэльянцу

(182) 25—9

Ա. ՌԱԼԼԷ ԵՒ ԸՆԿ.

ՄՈՍԿՈՒԱՑ ՈՒՄ

Արքունի մատակարարներ

—ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ—

ՍԱՊՈՆՆԵՐ XX դարու Ապխտակ յասմիկ Կապանել. վարդ Ձերեմոնիալ. սապ. Իշխանակ. սապ. ԴՈՒԽԵՐ Ցասմիկ Պարսկական յասմ. Ապխտակ յասմիկ Դաշտային ծաղիկ. Ապխտակ հերիկ

ՎԱԶԱԼԻՆԻ ՍԱՊՈՆ—ՎԱԶԱԼԻՆԻ ՊՈՄԱԴ

Վաճառւում են Ռուսիայի կայսրութեան բոլոր քաղաքներում։ Պրէյս-կուրանտն ուղարկւում է ձրի։

5—3

Дозволено цензурою. Тифлисъ, 26-го Іюля 1891 г. Տպարան Կաւկազ լրագրի գրասենեակի Типографія конторы газеты Кавказъ, Гол. пр, д. Читахова